ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 3-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը։*

* * *

Մայիսի 7-ին, հինգշաբթի, «Համբարձումն Քրիստոսի»։ *Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։*

Հավարտ սուրբ պատարագի, Իշման Ս. Սեղանի առաջ, կատարվեց Մաղթանք՝ Հայրապետական Աթոռի Սսից Ս. Էջմիածին փոխադրության տարեդարձի առթիվ։

* * *

Մայիսի 10-ին, կիրակի, երկրորդ Մաղկազարդ։ *Օրվա տոնի առթիվ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը, բնաբան ունենալով «Որ ի լրումն բոլորից տնօրինական մեծ խորհրդոյն առեցելովն առ ի մէնջ, փառօք առ Հայր համբարձաւ»։*

* * *

Մայիսի 14-ին, հինգշաբթի, *Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուխտի եկավ հյուրաբար Հայաստանում գտնվող Եթովպիայի հայտնի նկարիչ պր. Աֆևորգ Թեկլեն։*

Հարգելի հյուրը այցելեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և Նորին Ս. Օծության հանձնեց Մոսկվայում Եթովպիայի կայսերական դեսպանի նամակը հանուն Հայլե Սելասիե կայսեր՝ այս տարի աշնան Ադդիս-Աբեբայում գումարվելիք միաբնակ եկեղեցիների համագումարի կապակցությամբ։

Այնուհետև բարձրաստիճան հյուրը, հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետի առաջնորդությամբ, այցելեց Մայր Տաճարի եկեղեցական արվեստի գանձարանը և Հոգևոր Ճեմարանը։

* * *

Մայիսի 18-ին, երկուշաբթի, *Հոգևոր Ճեմարանում սկսվեցին 1963—1964 ուսումնական տարվա ամավերջի քննությունները։ Քննությունների բացումը կատարվեց եկեղեցական արարողությամբ, նախագահությամբ Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի։*

Ամավերջի քննությունները կշարունակվեն մինչև հունիսի 4-ը։

* * *

Մայիսի 20-ին, չորեքշաբթի, *Վեհարանում պաշտոնապես Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին հանձնվեց Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի պատվոգիրը՝ խաղաղության համար մղվող պայքարին գործուն մասնակցություն ունենալու, ժողովուրդների փոխըմբռնման հասնելուն աջակցելու համար։*

* * *

Մայիսի 24-ին, կիրակի, *Մայր Տաճարում իր անդրանիկ պատարագը մատուցեց հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղա Սերայդարյանը և քարոզեց «Եւ աղաչեցից առ Հայր և Նա մխիթարիչ տացէ ձեզ» բնաբանով։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Մայիսի 25-ին, երկուշաբթի, *«Սրբոց կուսանացն Հռիփսիմեանց»։*

Առավոտյան ժամերգությունը պաշտվեց Մայր Տաճարում։ Ժամը 11-ին, միաբանությունը և Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը ուխտի գնացին Ս. Հռիփսիմեի վանքը, ուր Կույսի անվան վկայարան-տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը և քարոզեց «Զեզ նմանել կարօտին ամենայն հոգիք» «Անձինք նվիրեալք» Շարականի բառերով։

Սուրբ պատարագին ներկա էր հավատացյալների բազմություն։

Հավարտ սուրբ պատարագի, տեղի ունեցավ հոգեհանգստյան պաշտոն Կոմիտաս կաթողիկոսի և Ս. Հռիփսիմե տաճարի նորոգության բարերարներ Հյուսիսյան և Մանուկյան գերդաստանների ննջեցյալների հիշատակին։

* * *

Մայիսի 26-ին, երեքշաբթի, *«Սրբոց կուսանացն Գայիանեանց»։*

Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

* * *

Մայիսի 28-ին, հինգշաբթի, *«Տօն Սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին»*

Ս. Շողակաթի վանքում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

Հավարտ սուրբ պատարագի, տեղի ունեցավ հոգեհանգստյան պաշտոն՝ տաճարի նորոգության բարերար Գալենդերյան գերդաստանի հին և նոր ննջեցյալների հիշատակին։

* * *

Մայիսի 23-ին, շաբաթ, *«Տօն Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին ելիցն ի վիրապէն»։ Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի վրա, պատարագեց հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղա Սերայդարյանը և քարոզեց «Արմատ ճշմարիտ աստուածային օրինաց» բնաբանով։*

* * *

Մայիսի 31-ին, կիրակի, *«Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի»։ Մայր Տաճարում, Էջմիածնի հիմնադրության մեծ տոնի առթիվ, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը և քարոզեց «Տեղիդ այդ եղիցի տուն աղօթից ամենայն հաւատացելոց և Աթոռ քահանայապետութեան» բնաբանով։*

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվեց Հայրապետական մաղթանք։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի տոնի առթիվ, Վեհարանում ընդունեց շնորհավորություններ։